


**1.2.7. Մանրածախ առևտուր, այլ ծառայություններ
(սպառողական շուկա)**

ՀՀ սպառողական շուկա (մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը)

	2004թ. հունվար-դեկտեմբեր		ընդհանուրի նկատմամբ, %	
	փաստացի ծավալը, մլն. դրամ	2003թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ, %	2003թ. հունվար-դեկտեմբեր	2004թ. հունվար-դեկտեմբեր
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը	1084595.9	110.9	100.0	100.0
<i>այդ թվում՝</i>				
մանրածախ ապրանքաշրջանառություն	849553.4	110.5	77.7	78.3
բնակչությանը մատուցված ծառայություններ	235042.5	113.8	22.3	21.7

ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների տեսակարար կշիռները 2004թ. ըստ եռամսյակների

(ընդհանուրի նկատմամբ, %)




ՀՀ սպառողական շուկան 2004թ. հունվար-դեկտեմբերին բնութագրվել է կայուն աճի միտումով: Նույն ժամանակաշրջանում սպառողական շուկայի ընդհանուր ծավալում արձանագրվել է մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի տեսակարար կշռի աճ՝ I եռամսյակի 74.1%-ից մինչև IV եռամսյակի 81.2%-ը:

2004թ. հունվար-դեկտեմբերին սպառողական շուկայի ծավալը 2003թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, կազմել է 110.9 %:

Մանրածախ առևտուր

2004թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 849553.4 մլն. դրամ, որը 2003թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 10.5%-ով: 2004թ. դեկտեմբերին նույնքանի համեմատությամբ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, համադրելի գներով, կազմել է 191.2%:

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ֆիզիկական ծավալի ինդեքսները 2004թ. հունվար-դեկտեմբերին 2003թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, համադրելի գներով, %



ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը


	2004թ. հունվար-դեկտեմբեր		Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռն ընդհանուրի նկատմամբ, %
	փաստացի ծավալը, մլն. դրամ	2003թ հունվար-դեկտեմբերի նկատմամբ, համադրելի գներով, %	
Ընդամենը	849553.4	110.5	100
այդ թվում՝			
խանութներ	456025.4	113.2	53.7
հանրային սնունդ	8676.6	121.2	1.0
սպառողական ապրանքների շուկաներ	306590.9	116.5	36.1
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	24465.0	91.8	2.9
կրպակներ	53795.5	78.5	6.3

Բնակչության սպառողական պահանջարկը գլխավորապես բավարարվել է խանութների և սպառողական ապրանքների շուկաների միջոցով: 2004թ. հունվար-դեկտեմբերին հանրապետության մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալի գերակշռող մասը՝ 89.8%-ը (762616.3 մլն.դրամ), ձևավորվել է վերջիններիս միջոցով: Այս միտումը բնորոշ է հանրապետության գրեթե բոլոր մարզերին:


Խանութների և սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող առևտրի տեսակարար կշիռը մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում ըստ ՀՀ մարզերի, 2004թ. հունվար-դեկտեմբերին

	Ընդամենը	այդ թվում										
		ք.երևան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
Խանութների և սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	762616.3	666295.6	7218.1	8036.0	11652.7	5462.1	18824.8	20930.1	9117.7	5502.0	3915.1	5662.1
այդ թվում՝ ընդհանուրի նկատմամբ, %	89.8	92.4	90.4	84.9	73.8	78.9	72.4	78.2	67.6	67.6	89.0	59.9

Մանրածախ ապրանքաշրջանառության ֆիզիկական ծավալի ինդեքսները (ըստ ձևավորման աղբյուրների) նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ, %



Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալն ըստ ձևավորման աղբյուրների, ՀՀ մարզերով, 2004թ հունվար-դեկտեմբերին



Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալների դինամիկան ըստ ձևավորման աղբյուրների, 2004թ. հունվար-դեկտեմբերին

	Ապրանքաշրջանառության ծավալը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում ընդհանուրի նկատմամբ, %				
		խանութներ	հանրային սնունդ	սպառողական ապրանքների շուկաներ	գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	կրպակներ
Հունվար	44861.5	59.6	0.9	24.2	3.5	11.8
Հունվար-փետրվար	90279.5	60.3	1.1	23.9	3.5	11.2
Հունվար-մարտ	147778.1	60.0	1.0	26.0	3.4	9.6
Հունվար-ապրիլ	207251.7	59.3	1.1	27.3	3.2	9.1
Հունվար-մայիս	269648.0	59.5	1.1	27.6	3.2	8.6
Հունվար-հունիս	332506.2	59.1	1.1	28.4	3.1	8.3
Հունվար-հուլիս	401837.0	58.0	1.2	29.7	3.1	8.0
Հունվար-օգոստոս	476554.7	57.2	1.1	31.0	3.1	7.6
Հունվար-սեպտեմբեր	550466.8	56.9	1.1	31.6	3.0	7.4
Հունվար-հոկտեմբեր	623928.5	56.4	1.2	32.2	3.0	7.2
Հունվար-նոյեմբեր	699970.8	56.3	1.1	32.4	3.1	7.1
Հունվար-դեկտեմբեր	849553.4	53.7	1.0	36.1	2.9	6.3


ՀՀ մանրածախ առևտրի գործող օբյեկտների քանակը և ապրանքաշրջանառության ծավալներն ըստ ՀՀ մարզերի, 2004թ. հունվար-դեկտեմբերին

	Ընդամենը		այդ թվում									
	գործող օբյեկտների քանակը, միավոր	ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	խանութներ		հանրային սնունդ		կրպակներ		գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ		սպառողական ապրանքների շուկաներ	
			քանակը, միավոր	ծավալը, մլն. դրամ	քանակը, միավոր	ծավալը, մլն. դրամ	քանակը, միավոր	ծավալը, մլն. դրամ	քանակը, միավոր	ծավալը, մլն. դրամ	քանակը, միավոր	ծավալը, մլն. դրամ
ք. Երևան	6683	721148.2	3337	385010.3	633	6852.1	2678	34555.0	11	13445.5	24	281285.3
Արագածոտն	221	7980.8	98	6997.3	15	224.3	101	356.9	4	181.5	3	220.8
Արարատ	588	9461.5	375	6470.3	15	224.9	191	1043.4	3	157.2	4	1565.7
Արմավիր	417	15786.8	80	7121.2	9	145.9	322	1212.6	3	2775.6	3	4531.5
Գեղարքունիք	437	6925.6	199	3522.1	11	94.5	216	717.3	3	651.7	8	1940.0
Լոռի	1114	25984.9	316	11612.8	23	217.5	767	4469.5	4	2473.1	4	7212.0
Կոտայք	1280	26776.8	341	16986.3	28	418.4	897	5171.7	4	256.6	10	3943.8
Շիրակ	639	13496.6	336	7177.5	41	247.3	253	1446.7	2	2684.9	7	1940.2
Սյունիք	421	8137.5	140	4812.9	26	83.9	250	2052.4	3	499.2	2	689.1
Վայոց ձոր	117	4400.8	46	3704.4	10	45.8	59	415.4	1	24.5	1	210.7
Տավուշ	757	9453.9	253	2610.3	19	122.0	481	2354.6	2	1315.2	2	3051.8
Ընդամենը	12674	849553.4	5521	456025.4	830	8676.6	6215	53795.5	40	24465.0	68	306590.9

ՀՀ մարզերին բնորոշ են ապրանքաշրջանառության տարբեր մակարդակներ: Երևան քաղաքի և ՀՀ մնացած մարզերի ապրանքաշրջանառության մակարդակների տարբերությունները հիմնականում պայմանավորված են առևտրի օբյեկտների քանակով, բնակչության թվաքանակով, ապրանքաշրջանառության կառուցվածքով, նյութատեխնիկական բազայի հագեցվածությամբ, ինչպես նաև բնակչության գնողունակ պահանջարկի մակարդակի տարբերություններով և արտաքին շուկաներին կապող կոմունիկացիաների տեղաբաշխմամբ:

Ապրանքաշրջանառության ծավալների տեսակարար կշիռներն ըստ մարզերի,


2004թ. հունվար-դեկտեմբերին, ընդհանուրի նկատմամբ, %



ՀՀ մանրածախ առևտրի ապրանքաշրջանառության ծավալի 84.9%-ը (721148.2 մլն.դրամ) ապահովել են Երևանի մանրածախ առևտրի գործող օբյեկտները, որը բացատրվում է վերը նշված գործոններով և այն հանգամանքով, որ հանրապետության մի շարք մարզերի (հիմնականում Երևանին մոտ գտնվող մարզերի) բնակչությունն ապրանքների ձեռքբերման պահանջարկի մի մասը բավարարում է նաև Երևանի առևտրի օբյեկտներում:

ՀՀ մանրածախ առևտրում պահպանվել է խանութների միջոցով իրականացվող առևտրի գերակայության միտումը: Ընդ որում, 2004թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի 53.7%-ը (456025.4 մլն.դրամ) ձևավորվել է խանութների միջոցով: 2003թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ այդ ցուցանիշը, համադրելի գներով, կազմել է 113.2%: Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների, հանրապետությունում գործող խանութների 44.7%-ը մասնագիտացված է պարենային ապրանքների, 44.0%-ը՝ ոչ պարենային և 11.3%-ը՝ խառը ապրանքների վաճառքով:

Խանութների քանակի բաշխվածությունը (պարենային, ոչ պարենային, խառը) 2004թ. հունվար-դեկտեմբերին մարզերով, % ընդհանուրի նկատմամբ




Խանութների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի ապրանքաշրջանառության ծավալը

ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2004թ. հունվար-դեկտեմբերին

	Խանութների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Մանրածախ ապրանքաշրջանառության փաստացի ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը ընդամենի նկատմամբ, %
Ընդամենը	5521	20381	456025.4	100.0
այդ թվում՝				
մինչև 5 մարդ (գերփոքր)	4792	9146	122222.2	26.8
6-15 մարդ (փոքր)	582	4913	85057.2	18.7
16-30 մարդ (միջին)	96	1998	58230.1	12.8
31 և ավելի մարդ (խոշոր)	51	4324	190515.9	41.7

Վիճակագրական մոնիթորինգում ընդգրկված խանութների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքր խանութները՝ 86.8%: Հարկ է նշել, որ դրանց ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 26.8%, այն դեպքում երբ խանութների ընդհանուր քանակում 0.9%-ը կազմող խոշոր խանութների միջոցով իրականացված ապրանքաշրջանառության ծավալը կազմել է՝ 41.7 %:

Խանութների միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2004թ. հունվար-դեկտեմբերին, %



Խանութների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, ՀՀ մարզերով, 2004թ. հունվար-դեկտեմբերին

	Ապրանքաշրջանառության ծավալը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում							
		մինչև 5 մարդ		6-15 մարդ		16-30 մարդ		31 և ավելի մարդ	
		ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %
ք. Երևան	385010.3	82995.3	21.6	65572.3	17.0	53817.7	14.0	182625.0	47.4
Արագածոտն	6997.3	3742.2	53.5	3255.1	46.5	-	-	-	-
Արարատ	6470.3	5136.9	79.4	1162.3	18.0	171.1	2.6	-	-
Արմավիր	7121.2	4138.9	58.1	475.0	6.7	753.0	10.6	1754.3	24.6
Գեղարքունիք	3522.1	2521.2	71.6	720.1	20.4	280.8	8.0	-	-
Լոռի	11612.8	7993.9	68.8	3194.8	27.5	424.1	3.7	-	-
Կոտայք	16986.3	5305.9	31.3	3617.6	21.3	2077.2	12.2	5985.6	35.2
Շիրակ	7177.5	4108.4	57.2	2453.1	34.2	575.4	8.0	40.6	0.6
Սյունիք	4812.9	2893.7	60.1	1788.4	37.2	130.8	2.7	-	-
Վայոց ձոր	3704.4	1491.6	40.3	2102.4	56.7	-	-	110.4	3.0
Տավուշ	2610.3	1894.2	72.6	716.1	27.4	-	-	-	-
Ընդամենը	456025.4	122222.2	26.8	85057.2	18.7	58230.1	12.8	190515.9	41.7


Հանրային սննդի գործող օբյեկտների միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության

Ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2004թ. հունվար-դեկտեմբերին

	Օբյեկտների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Մանրածախ ապրանքաշրջանառության փաստացի ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռը ընդամենի նկատմամբ, %
Ընդամենը	830	4444	8676.6	100.0
<i>այդ թվում՝</i>				
մինչև 5 մարդ (գերփոքր)	630	1410	2498.3	28.8
6-15 մարդ (փոքր)	152	1321	2373.2	27.4
16-30 մարդ (միջին)	31	649	1341.9	15.4
31 և ավելի մարդ (խոշոր)	17	1064	2463.2	28.4

Վիճակագրական մոնիթորինգում ընդգրկված հանրային սննդի գործող օբյեկտների ընդհանուր քանակում գերակշռել են գերփոքրերը՝ 75.9%, իսկ դրանց ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 28.8 %:

Հանրային սննդի գործող օբյեկտների միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2004թ. հունվար-դեկտեմբերին, %



Հանրային սննդի գործող օբյեկտների միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, ՀՀ մարզերով, 2004թ. հունվար-դեկտեմբերին

Մարզեր	Ապրանքաշրջանառության ծավալը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում							
		մինչև 5 մարդ		6-15 մարդ		16-30 մարդ		31 և ավելի մարդ	
		ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %
ք. Երևան	6852.1	1482.3	21.7	1934.1	28.2	1235.4	18.0	2200.3	32.1
Արագածոտն	224.3	44.4	19.7	61.8	27.6	-	-	118.1	52.7
Արարատ	224.9	224.9	100.0	-	-	-	-	-	-
Արմավիր	145.9	72.2	49.5	73.7	50.5	-	-	-	-
Գեղարքունիք	94.5	94.5	100.0	-	-	-	-	-	-
Լոռի	217.5	125.9	57.9	91.6	42.1	-	-	-	-
Կոտայք	418.4	184.1	44.0	55.8	13.3	33.7	8.1	144.8	34.6
Շիրակ	247.3	82.3	33.3	92.2	37.3	72.8	29.4	-	-
Սյունիք	83.9	56.8	67.7	27.1	32.3	-	-	-	-
Վայոց ձոր	45.8	45.8	100.0	-	-	-	-	-	-
Տավուշ	122.0	85.1	69.8	36.9	30.2	-	-	-	-
Ընդամենը	8676.6	2498.3	28.8	2373.2	27.4	1341.9	15.4	2463.2	28.4

ՀՀ մանրածախ ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալում առանձնակի տեղ ունեն սպառողական ապրանքների շուկաները: Հանրապետությունում հաշվառված

սպառողական ապրանքների շուկաներից ստացված հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա, 2004թ. հունվար-դեկտեմբերին ապրանքաշրջանառության ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 306590.9 մլն. դրամ, որը 2003թ. համապատասխան ժամանակաշրջանի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, կազմել է 116.5%:


ՀՀ սպառողական ապրանքների շուկաների քանակը և ապրանքաշրջանառության ծավալներն ըստ մարզերի և ք. Երևանի, 2004թ. հունվար-դեկտեմբերին

Մարզեր	Շուկաների քանակը	Ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	այդ թվում՝ ընդհանուրի նկատմամբ, %	
			պարենային ապրանքներ	ոչ պարենային ապրանքներ
ք. Երևան	24	281285.3	7.4	92.6
Արագածոտն	3	220.8	-	100.0
Արարատ	4	1565.7	0.9	99.1
Արմավիր	3	4531.5	23.5	76.5
Գեղարքունիք	8	1940.0	23.6	76.4
Լոռի	4	7212.0	56.5	43.5
Կոտայք	10	3943.8	17.7	82.3
Շիրակ	7	1940.2	5.3	94.7
Սյունիք	2	689.1	-	100.0
Վայոց ձոր	1	210.7	-	100.0
Տավուշ	2	3051.8	19.6	80.4
Ընդամենը	68	306590.9	9.1	90.9

Հարկ է նշել, որ հանրապետությունում հաշվառված սպառողական ապրանքների շուկաները հիմնականում մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով: Մասնավորապես, 68 սպառողական ապրանքների շուկաներից 45-ը՝ ոչ պարենային ապրանքների վաճառքով մասնագիտացված շուկաներն են: Ընդ որում, ք. Երևանի 24 շուկաներից՝ 16-ը, Գեղարքունիքի մարզում 8-ից՝ 6-ը, Լոռու մարզում 4-ից՝ 3-ը, Կոտայքի մարզում 10-ից 6-ը մասնագիտացված են ոչ պարենային ապրանքների վաճառքով: Դրանով է պայմանավորված հանրապետության սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ծավալում ոչ պարենային ապրանքների ապրանքաշրջանառության մեծ տեսակարար կշիռը, որը կազմել է 90.9%:

ՀՀ սպառողական ապրանքների շուկաների ապրանքաշրջանառության ընդհանուր ծավալը 2004թ. հունվար-դեկտեմբերին ըստ Երևան քաղաքի և ՀՀ մյուս մարզերի (ամփոփ)

(ընդհանուրի նկատմամբ, %)




Սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2004թ. հունվար-դեկտեմբերին

	Շուկաների քանակը, միավոր	Աշխատողների միջին ցուցակային թվաքանակը, մարդ	Ապրանքաշրջանառության փաստացի ծավալը, մլն. դրամ	Ապրանքաշրջանառության տեսակարար կշիռն ընդամենի նկատմամբ, %
Ընդամենը	68	811	306590.9	100.0
<i>այդ թվում՝</i>				
մինչև 5 մարդ (գերփոքր)	35	102	61387.5	20.0
6-15 մարդ (փոքր)	20	177	38017.2	12.4
16-30 մարդ (միջին)	8	170	13742.2	4.5
31 և ավելի մարդ (խոշոր)	5	362	193444.0	63.1

Սպառողական ապրանքների շուկաներում վարձակալական հիմունքներով առևտուր իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի թվաքանակն ունի հետևյալ բաշխվածությունը. գերփոքր՝ 2388, փոքր՝ 2001, միջին՝ 961 և խոշոր՝ 4640 մարդ:

Սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, 2004թ. հունվար-դեկտեմբերին, %



Սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող ապրանքաշրջանառության ծավալն ըստ աշխատողների թվաքանակով որոշվող չափերի, մարզերով, 2004թ. հունվար-դեկտեմբերին

	Ապրանքաշրջանառության ծավալը, ընդամենը, մլն. դրամ	այդ թվում՝							
		մինչև 5 մարդ		6-15 մարդ		16-30 մարդ		31 և ավելի մարդ	
		ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %	ծավալը, մլն. դրամ	ընդամենի նկատմամբ, %
ք. Երևան	281285.3	55878.1	19.9	29088.6	10.3	2874.6	1.0	193444.0	63.1
Արագածոտն	220.8	220.8	100.0	-	-	-	-	-	-
Արարատ	1565.7	1058.6	67.6	507.1	32.4	-	-	-	-
Արմավիր	4531.5	-	-	1288.1	28.4	3243.4	71.6	-	-
Գեղարքունիք	1940.0	179.1	9.2	885.0	45.7	875.9	45.1	-	-
Լոռի	7212.0	1288.2	17.9	1363.4	18.9	4560.4	63.2	-	-
Կոտայք	3943.8	1758.3	44.6	1517.7	38.5	667.8	16.9	-	-
Շիրակ	1940.2	399.8	20.6	1540.4	79.4	-	-	-	-
Սյունիք	689.1	393.9	57.2	295.2	42.8	-	-	-	-
Վայոց ձոր	210.7	210.7	100.0	-	-	-	-	-	-
Տավուշ	3051.8	-	-	1531.7	50.2	1520.1	49.8	-	-
Ընդամենը	306590.9	61387.5	20.0	38017.2	12.4	13742.2	4.5	193444.0	63.1

**Մանրածախ շուկայի համեմատական ակտիվությունն ըստ մարզերի,
2004թ. հունվար-դեկտեմբերին**

Մարզեր	Բնակչության թվաքանակը 2004թ.հունվար-դեկտեմբերին (միջինը), հազ. մարդ	Ապրանքաշրջանառությունը 2004թ. հունվար-դեկտեմբերին, մլն. դրամ	Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող ապրանքաշրջանառությունը, դրամ	Մեկ բնակչին ընկնող ապրանքաշրջանառությունը հանրապետության միջինի նկատմամբ, %
ք.Երևան	1102.4	721148.2	654162.0	247.5
Արագածոտն	139.0	7980.8	57415.8	21.7
Արարատ	273.1	9461.5	34644.8	13.1
Արմավիր	277.8	15786.8	56827.9	21.5
Գեղարքունիք	238.8	6925.6	29001.7	11.0
Լոռի	284.2	25984.9	91431.7	34.6
Կոտայք	273.6	26776.8	97868.4	37.0
Շիրակ	281.9	13496.6	47877.3	18.1
Սյունիք	153.0	8137.5	53186.3	20.1
Վայոց ձոր	55.8	4400.8	78867.4	29.8
Տավուշ	134.3	9453.9	70393.9	26.6
Ընդամենը	3213.9	849553.4	264337.2	X

2004թ. հունվար-դեկտեմբերին պահպանվել է 2003թ. նույն ժամանակաշրջանում արձանագրված ք.Երևանի մանրածախ շուկայի գերակայության միտումը ՀՀ մյուս մարզերի նկատմամբ: Այսպես, ք.Երևանի մանրածախ շուկայի ծավալը 2004թ. հունվար-դեկտեմբերին մոտ 2.5 անգամ գերազանցել է հանրապետական միջին ցուցանիշը: Մնացած մարզերի մանրածախ շուկայի տնտեսական ակտիվությունը հանրապետական միջինի նկատմամբ հիմնականում տատանվել է 11.0 – 37.0 % միջակայքում:

2004թ. հունվար-դեկտեմբերին ապրանքային պաշարների փոփոխությունը մանրածախ առևտրում և դրանց ապահովվածությունն օրերով

Ամիսներ	Ապրանքային պաշարներ, մլն. դրամ	Ապրանքային պաշարների ապահովվածությունն օրերով
2004թ. հունվարի 1-ի դրությամբ	41850.5	44
Փետրվարի 1-ի դրությամբ	41794.0	62
Մարտի 1-ի դրությամբ	45704.3	65
Ապրիլի 1-ի դրությամբ	44109.2	55
I եռամսյակի միջինը	43492.8	60
Մայիսի 1-ի դրությամբ	50532.2	59
Հունիսի 1-ի դրությամբ	51387.2	54
Հուլիսի 1-ի դրությամբ	52143.0	63
II եռամսյակի միջինը	49912.4	57
Օգոստոսի 1-ի դրությամբ	53319.1	62
Սեպտեմբերի 1-ի դրությամբ	54384.3	59
Հոկտեմբերի 1-ի դրությամբ	57926.7	61
III եռամսյակի միջինը	54246.1	61
Նոյեմբերի 1-ի դրությամբ	58250.8	65
Դեկտեմբերի 1-ի դրությամբ	58875.6	58
2005թ. հունվարի 1-ի դրությամբ	67112.8	44
IV եռամսյակի միջինը	59882.0	57

2005թ. հունվարի 1-ի դրությամբ ապրանքային պաշարները հանրապետության մանրածախ առևտրի գործող օբյեկտներում կազմել են 67112.8 մլն. դրամ, իսկ ապրանքային պաշարների ապահովվածությունը՝ 44 օր:

Մանրածախ առևտրի գործող օբյեկտների ապրանքային պաշարները 2005թ. հունվարի 1-ի դրությամբ և դրանց ապահովվածությունն (օրերով)

	Ընդամենը	ըստ մարզերի										
		ք.երեվան	Արագածոտն	Արարատ	Արմավիր	Գեղարքունիք	Լոռի	Կոտայք	Շիրակ	Սյունիք	Վայոց ձոր	Տավուշ
Ապրանքային պաշարները, մլն. դրամ	67112.8	62459.9	89.6	384.6	166.7	277.2	751.4	1281.9	839.3	347.4	179.9	334.9
Ապրանքային պաշարների ապահովվածությունն օրերով	44	44	8	22	28	35	38	28	34	36	58	52

Ապրանքային պաշարների ապահովվածությունն օրերով հանրապետության միջինից ցածր է Արագածոտնի (8 օր), Արարատի (22 օր), Արմավիրի (28 օր), Կոտայքի (28 օր), Շիրակի (34 օր), Գեղարքունիքի (35 օր), Սյունիքի (36 օր) և Լոռու (38 օր) մարզերում:

ՀՀ սպառողական շուկայում իրենց ուրույն տեղն ունեն գյուղատնտեսական արտադրանքի շուկաները: 2004թ. հունվար-դեկտեմբերին դրանցում իրականացվող առևտրին բաժին է ընկել ընդհանուր ապրանքաշրջանառության ծավալի 2.9%-ը կամ 24465.0 մլն. դրամը*:

* Հանրապետությունում գործող գյուղատնտեսական արտադրանքի չկազմակերպված շուկաների ապրանքաշրջանառության ծավալները հաշվառված չեն: